Educational Technology and Mobile Learning կայքում ներկայացվել է PowerPoint ծրագրի օգտակար և հետաքրքիր ձևանմուշների հավաքածու, որը կարելի է օգտագործել կրթական տարբեր նպատակներով: Այստեղ հավաքված են 8 ձևանմուշներ, որոնք հատուկ մշակվել են Microsoft Templates պատկերասրահի կրթության բաժնում և բոլորն անվճար են ներբեռնելու և սեփական դասավանդման իրավիճակին հարմարացնելու համար: Դրանք կարելի է օգտագործվել հետազոտական շնորհանդեսներ, վիկտորինաների և խաղեր ստեղծելու, խմբային նախագծեր իրականացնելու, ուսումնական տարին ամփոփելու, տարբեր ցուցադրություններ ներկայացնելու համար:

Այդ ձևանմուշներն են.

1. **Virtual field trip** – թվային մուլտիմեդիա հնարավորությունների օգտագործմամբ վիրտուալ էքսկուրսիաների ձևանմուշ

2. **Trading cards** – պատմական շրջանին համապատասխանող քարտերի հավաքածուների ձևանմուշ

3. **Research presentation** – նոր որակի, ակնահաճո հետազոտական ցուցադրությունների ձևանմուշ

4. **Quiz show game** – վիկտորինաների, իմացական խաղերի կազմակերպման ձևանմուշ

5. **End of the year slideshow** –աշակերտների հետ ուսումնական տարվա ավարտը հետաքրքիր նշելու նպատակով սահիկաշարի ձևանմուշ

6. **Group project presentation** - նախագծի ցուցադրությունը խմբով ստեղծելու ձևանմուշ

7. **Book report presentation** – գրքի մասին ցուցադրության ձևանմուշ

8. **Welcome back to school** – Բարի գալուստ դպրոց՝ աշակերտներին, ծնողներին ողջունելու, դպրոցի առաքելությունը, ռազմավարությունն ու ծրագրերը ներկայացնելու ձևանմուշ:

Նյութի աղբյուրը. Educational Technology and Mobile Learning